ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐՈՂՆԵՐԻ
ՄԻՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԱՅԻՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ
WRITERS UNION OF ARMENIA
SHIRAK'S DEPARTMENT
СОЮЗ ПИСАТЕЛЕЙ АРМЕНИИ
ШИРАКСКОЕ ОТДЕЛЕНИЕ
377500, ՀՀ Ք. ԳՅՈՒՄՐԻ, Գ. Նժդեհ 16
ՀԵՌ. +374 94 001125, +374 99 001125
16 G. Nzdeh STR. GYUMRI, RA 377500
TEL.: +374 94 001125, +374 99 001125
377500, РА Г. ГЮМРИ, G. Нжде 16
ТЕЛ. +374 94 001125, +374 99 001125

Գյումրու քաղաքապետին
փոխարինող պարոն Ավետիս Առաքելյանին

Հարգելի պարոն Առաքելյան

Այս տարի լրանում է Հայաստանի գրողների միության Շիրակի մարզային բաժանմունքի 95-ամյակը: Կառույց, որը հիմնադրել են Ավ. Իսահակյանը, Մկրտիչ Արմենը և էլի ուրիշ երևելիներ:

Տասնամյակներ շարունակ մեր գրական կազմակերպությունը ունեցել է ստեղծագործական միության կարգավիճակ: Վերջին տարիներին այն ստացել է հասարակական կազմակերպության կարգավիճակ /ոչ մեր ցանկությամբ/: Լինելով մայր կառույցի բաժանմունք, մենք չենք կարող օգտվել ո՛չ մի տեսակի դրամաշնորհից: Ուստի, դարձյալ ակնկալում ենք Ձեր ֆինանսական աջակցությունը՝ քաղաքի գրական կյանքը ակտիվ պահելու համար:

Սկսած 2000 թվականից ՀԳՄ Շիրակի մարզային բաժանմունքին Գյումրու քաղաքապետարանի կողմից տրամադրված դրամական միջոցների շնորհիվ կազմակերպվել են բազմաթիվ գրական միջոցառումներ, մեծարման երեկոներ, տարելիցներ, գրքերի շնորհանդեսներ, ուխտագնացություններ, մրցանակաբաշխություններ…

Այս տարի ևս Գյումրի քաղաքի գրական կազմակերպության ծրագրերը (գրահրատարակչական աշխատանքների կազմակերպում, գրական միջոցառումների անցկացում) իրականացնելու նպատակով դիմում ենք Ձեզ, ակնկալելով, որ Դուք դարձյալ նեցուկ կլինեք գրական կյանքի շարունակականությունը ապահովելու և զարգացնելու գործընթացին:

2026թ. լրանում են Մկրտիչ Արմենի ծննդյան 120, Շմավոն Թորոսյանի ծննդյան 100, Քաջիկ Գրիգորյանի ծննդյան 100, Շիրակ Մանուկյանի ծննդյան 85, Սարո Գյոդակյանի ծննդյան 75, Ժորա Կարապետյանի ծննդյան 75, Գագիկ Սարոյանի ծննդյան 65, Ռոզա Հովհաննիսյանի ծննդյան 65, Թինա Վարդանյանի ծննդյան 60 ամյակները, որոնք հարկ է նշել հավուր պատշաճի:

Տերյանական օրերին գրական պատվիրակությունը դարձյալ ցանկանում է այցելել Նաիրի երկրի բանաստեղծի ծննդավայր Ջավախք և հարգանքի տուրք մատուցել մեծանուն բանաստեղծին:

Ծրագրում ունենք նաև Արարատ Մկրտումյանի անվան և Կարապետ Հովսեփյանի անվան ամենամյա գրական մրցանակաբաշխություններ:

Նվազագույն ծախսերը, որ անհրաժեշտ են այս ամենի կազմակերպման համար կազմում են 800 000 դրամ (ներառված նաև տնտեսական ծախսերը):

Կանխավ երախտագիտությամբ՝

ՀԳՄ Շիրակի մարզային բաժանմունքի
նախագահ՝ Անդրանիկ Կարապետյան

25.03.2026թ.

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՅՈՒՄՐՈՒ ... ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐՈՂՆԵՐԻ ... ՄԻՈՒԹՅԱՆ ... ՄԱՐԶԱՅԻՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ
ՄՈՒՏՔ
ԱՌԱՔԵԼՅԱՆ
ԱՎԵՏԻՍ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ... ՄԻՈՒԹՅԱՆ ... ՄԱՐԶԱՅԻՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ
250326
3452

094001125

N	Անվանում	Ընդամենը /ՀՀ դրամ/
1	Մկրտիչ Արմենի ծննդյան 120	60 000
2	Շմավոն Թորոսյանի ծննդյան 100	60 000
3	Քաջիկ Գրիգորյանի ծննդյան 100	60 000
4	Շիրակ Մանուկյանի ծննդյան 85	40 000
5	Սարո Գյոդակյանի ծննդյան 75	60 000
6	Ժորա Կարապետյանի ծննդյան 75	50 000
7	Ռոզա Հովհաննիսյանի ծննդյան 65	50 000
8	Գագիկ Սարոյանի ծննդյան 65	80 000
9	Թինա Վարդանյանի ծննդյան 60	50 000
10	Գրական պատվիրակության այց Ջավախք	60 000
11	Արարատ Մկրտումյանի անվան մրցանակաբաշխություն	100 000
12	Կարապետ Հովսեփյանի անվան մրցանակաբաշխություն	100 000
13	Տնտեսական ծախսեր	50 000
14	Ընդամենը	800 000

ՀԳՄ Շիրակի մարզային բաժանմունքի

նախագահ՝ Անդրանիկ Կարապետյան

25.03.2026